

# ՀԱԿՈԲ ՂԱՐԻԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

## ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱՎԱԳ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ, ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ

Ծնվել է 1977 թ. հուլիսի 18-ին Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղում: 2005 թ. բնակություն է հաստատել Երևանում:

Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, որն 1994 թ. ավարտելով՝ ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության բաժին, այն ավարտելով 1998 թ.՝ ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արտադրությունից կտրված ասպիրանտուրա: 2001 թ. օգոստոսի 1-ին հրամանագրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի «Հայաստանը 1914–1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» թեմատիկ խմբում որպես կրտսեր գիտաշխատող: 2001 թ. սեպտեմբերի 7-ին հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Կարսի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2003 թ. հրամանագրվել է որպես գիտաշխատող ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի «Հայաստանի պատմական ժողովրդագրություն» թեմատիկ խմբում, իսկ 2005 թ.՝ ավագ գիտաշխատող:

2003–2008 թթ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանի վարիչ:

2008 թ. հոկտեմբերից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի, դեկտեմբերից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական, իսկ 2011 թ. մարտից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 004 մասնագիտական խորհուրդի գիտական քարտուղարն է:

2001–2003 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում (Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբոնի ասիստենտ), 2003–2004 թթ. աշխատել է Լոռիս Քալաշյանի անվան Հայկական բաց համալսարանի «Դիվանագիտություն և միջազգային հարաբերություններ» ֆակուլտետում որպես դեկան և դասախոս, 2002–2009 թթ. դասախոսել է Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում, 2006–2014 թթ.՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

2008 թ. ստացել է դոցենտի կոչում:

ՀՀ ԳԱԱ և Կրթամշակութային աշխատանքային միջազգային ծրագրերի փոխանակում ընկերակցություն հասարակական կազմակերպության կողմից արժանացել է գովեստագրի 2001 թ. ընթացքում հումանիտար գիտությունների բնագավառում գիտական ձեռքբերումների համար, իսկ 2003 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից արժանացել է պատվոգրի գիտության բնագավառում

ունեցած բազմաբեղուն գործունեության համար: 2013 թ. արժանացել է Գովեստագրի՝ ինստիտուտի հիմնադրման 70-ամյակի առթիվ և արդյունավետ գիտական գործունեության համար:

Մասնակցել է մի շարք գիտաժողովների և ԱՊՀ երկրների երիտասարդ պատմաբանների միջազգային մի քանի ամառային դպրոցի աշխատանքներին:

Հեղինակ է մոտ մեկ տասյնակ գիտական հոդվածների:

Հեղինակել է մեկ մենագրություն (Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2006, 236 էջ) և մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ (Կուրսային և ավարտական աշխատանքների մեթոդական ցուցումների ու Հայոց Նոր պատմության (XVII դ. II կես – 1918 թ.) թեմաների ձեռնարկ, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 102 էջ):

## Գ Ի Տ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր

1. Կարսի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի 1-ին երեսնամյակին, Երիտասարդ գիտաշխատողների 26-րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, հունիս 29–30, 1999, էջ 11–13:
2. Կարսի նահանգի վարչատարածքային բաժանումը 19-րդ դարի 1-ին երեսնամյակին, Երիտասարդ գիտաշխատողների 27-րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, նոյեմբերի 2–3, 2000, էջ 7–8:
3. Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI–XIX դ. առաջին կեսին, Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան (Հայագիտական գիտաժողով, 2004 թ. հունիսի 17–19, Զեկուցումների հիմնադրույթներ), Գիտաժողովը նվիրվում է Սասունի 1904 թ. հերոսամարտի հարյուրամյակին, Երևան, 2004, էջ 46–49:
4. Ծորագյալի գավառակի (Արևմտյան Շիրակ) վարչաժողովրդագրական նկարագիրը 1830-1877 թթ., Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր միջազգային գիտաժողովի (Գյումրի, 24–25 սեպտեմբերի) զեկուցումների դրույթներ, Երևան, Գիտություն, 2016, էջ 116–120:
5. Հյուսիսկովկասյան մահմեդական ժողովուրդների բնակեցումը Կարսի գավառում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի (Գյումրի, 27–29 սեպտեմբերի) նյութեր, Երևան, «Գիտություն», 2019, էջ 178–181 (դրույթներ):

## Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

1. Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում (17–19-րդ դարի 1-ին երեսնամյակին), Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք, Երևան, 2001, N 4, էջ 171–177:

2. Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում 19-րդ դարի 1-ին տասնամյակում, Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001, N 2, էջ 51–59:
3. Ժամանակագրություն կարսեցի Ավետիս քահանայի (ծանոթագրությունները՝ Հ. Մուրադյանի), ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Վավերագրեր, Երևան, 2001, N 2, էջ 13–40:
4. Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում 1813–1823 թթ., Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2002, N 3, էջ 40–49:
5. Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI–XIX դ. առաջին կեսին, Հայոց պատմության հարցեր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2005, N 5, էջ 61–76:
6. Некоторые правовые аспекты военно-гражданских отношений в Республике Армения, «Власть и общество в истории: Геополитические изменения на постсоветском пространстве в конце XX – начале XXI вв.», Кишинев, 2008, с. 141–143.
7. 1839 և 1856 թթ. հրովարտակները և արևմտահայ քաղաքական կյանքը, Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, Զանգակ-97, 2010, էջ 283–296:
8. Հայ ժողովրդի մասնակցությունը 1853–1856 թթ. Ղրիմի պատերազմին, Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, Զանգակ-97, 2010, էջ 296–308:
9. Участие армянского народа в Крымской войне (1853–1856 гг.) // Revista de istorie a Moldovei, Nr. 3–4 (83–84), 2010, p. 116–128.
10. Շորագյալի գավառակի (Արևմտյան Շիրակ) վարչաժողովրդագրական նկարագիրը 1830–1877 թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2016, հ. 19, էջ 84–92:
11. Բռնագաղթերն ու արտագաղթերը Կարսի նահանգից թուրք-իրանական պատերազմների շրջանում (1512–1639 թթ. ), Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2016, հ. 17, էջ 64–77:

## Մ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2006, 236 էջ:

## Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն  Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

1. Կուրսային և ավարտական աշխատանքների մեթոդական ցուցումների ու Հայոց Նոր պատմության (XVII դ. II կես – 1918 թ.) թեմաների ձեռնարկ, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, 102 էջ:

## Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Երեմիա Տեւկանց (Տէր-Սարգսեանց), Տոհմային յիշատակարան. Գիրք Ա. (1868–1872 թթ.), աշխատասիրությամբ՝ Հ.Դ. Մուրադյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018, XIX + 440 էջ:
2. Պատմության ինստիտուտ-75 (կազմողներ՝ Կ. Հ. Խաչատրյան, Հ. Դ. Մուրադյան, Հ. Կ. Սուքիասյան), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. , 293 էջ + 2 մամ. նկար: